РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА

ФОНД «ШИРАКСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ им. М. НАЛБАНДЯНА»

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT

«M. NALBANDYAN STATE UNIVERSITY OF SHIRAK» FOUNDATION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

3126, г. Гюмри, ул. П. Севака 4,
тел. (0312)2-71-99

3126, ք. Գյումրի, Պ. Սևակի 4, հեռ. (0312)2-71-99

3126, Gyumri, str. P. Sevak 4,
tel. (0312)2-71-99

E-mail: info@shsu.am www.shsu.am

01-24 № 649

«23» 09 2021թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Ա. Երիջանյանին

Հարգելի Ա. Երիջանյան,

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Գնորդ) և «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 16.03.2021թ.-ին կնքված ՇՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/1-2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը պետք է մատակարարեր Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները, սակայն Վաճառողը Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչ օրս մատակարարում չի կատարել:

2021 թվականի սեպտեմբերի 13-ին գրությամբ դիմել ենք Վաճառողին՝ ակնկալելով պայմանագրի կատարման վերաբերյալ իր կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները գրությամբ ներկայացնել, սակայն պատասխան չենք ստացել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամն հարկադրված է 2021թ. սեպտեմբերի 23-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողից կգանձվի որակավորման և պայմանագրի ապահովումներ՝ համապատասխանաբար 191340 (հարյուր ինսունմեկ հազար երեք հարյուր քառասուն) և 19134 (տասնինը հազար հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, պարտավորվում ենք ներկայացնել լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

«Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան»

հիմնադրամի ռեկտորի ԺՊ՝ **Ե.Սերոբյան**